Պ. ՌՈՄԱՆ ԻՍԱԵՎԻ ՆՈՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Վերածնունդ» թերթը գրում է.

— Մեր ազգային բարերար պ. Ռոման Իսաեվը, որի կառուցած վառապանծ եկեղեցին, կես միլիոն ռուբլ արժողությամբ դրեթե վերջացել է, այցելության գնալով Իրանա-Հնդկաստանի Առաջնորդ Հոր արժանանում է ունկնդրելու Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալի օրհնությունների պատգամը:

Առաջնորդ Հայրը ևս իր կողմից մեծապես գնահատում և գովում է պ. Ռոման Իսաեվի անմոռանալի և տեսական բարեգործությունը, որով բարերարը վառ է պահում Ս. Գրիգոր Լուսավորչի Կանթեղը և Հայ հոգիների արբազան ու անքակտելի կապը 1642 տարիների վառապանծ անցյալ ունեցող Մայր—Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Խոսակցության ընթացքում պ. Ռոման Իսաեվը պատրաստակամություն է հայտնել մինչև երկու ամիս մի ընտիր ֆորտ ինքնաշարժ նվիրել Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալին:

Պ. Ռոման Իսաեվի այս ոսկի սիրտը, այս Հարազատ հոգին, այս վեհանձն ու ազգանվեր վերաբերմունքը, ամեն խնդրում, ամեն առթիվ, լինի դա սիրելի Իրանի որբանոցի, խեղճանոցի, չքավորների, լինի հայ Համայնքի զանազան բարեգործությունների, լինի Մայր Հայրենիքի կարիքների, աղետյալ զինվորների որբերի, «Սասունցի Դավիթ» և «Բաղրամյան» տանկային ջոկատների, եկեղեցու կառուցման, դպրոցական և այլ խնդիրների և վերջապես Ազգընտիր Տեղակալին արժանավայել մեքենա նվիրաբերելու պատրաստակամ տրամադրությունը Ռոման Իսաեվին դարձնում է անզուգական առատաձեռն ու վեհանձն մի բարերար, որի անունը անջնջելի պիտի մնա հայ սրտերում:

Կեցցե՛ Ռոման Իսաեվը:

(«Վերածնունդ» թիվ 49, մարտ, 1945 թ.)